ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«15» Դեկտեմբեր 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 589-Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի թիվ 878-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման հարցերով փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
նախագահի
2024 թվականի .Դեկտեմբերի..... 15...-ի
N ...332 Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

I. ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) վերապահված գործունեության ոլորտում Կոմիտեի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթների իրականացման ծավալների կտրուկ ավելացմամբ պայմանավորված՝ նպատակահարմար է ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան փորձագետ:

2. Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը և պահանջները սահմանված են Կոմիտեի և Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական ու հաշվապահական հաշվառման վարչության կանոնադրություններով, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԻԿԱՕ) Դոկ. 8335-ով, Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալության (այսուհետ՝ ԵԱՍԱ) կանոնակարգերով, «ԵՎՐՈԿՈՆՏՐՈԼ» օդանավագնացության անվտանգության եվրոպական կազմակերպության (այսուհետ՝ Եվրոկոնտրոլ) մայրուղային գանձումների ծախսահիմքի սահմանման և միավորի դրույքաչափերի հաշվարկի սկզբունքներով, Եվրոպական ավիացիայի և շրջակա միջավայրի աշխատանքային խմբի (EAEG), ԻԿԱՕ-ի Միջազգային ավիացիայում ածխաթթու գազի արտանետումների նվազեցման և փոխարինման համակարգի (CORSIA) կանոնակարգերով:

II. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. Փորձագետին ներկայացվող պահանջներն են՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն, առնվազն 1 (մեկ) տարվա աշխատանքային ստաժ, որից առվազն 6 (վեց) ամիսը՝ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում, մասնագիտական լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով ու ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, անգլերեն լեզվի իմացություն, որը թույլ է տալիս օգտվել համապատասխան միջազգային կառույցների կայքերից և հրապարակված փաստաթղթերից, ինչպես նաև աշխատել տվյալների բազաների հետ և ապահովել համապատասխան գրագրությունները:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

4. Փորձագետը ներգրավվում է երեք ամիս ժամկետով:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

5. Փորձագետը Ծրագրի 4-րդ կետով նախատեսված ժամանակահատվածում իրականացնում է Ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

1) մասնակցում է բյուջետային գործընթացին, տվյալների հավաքագրմանը, մշակմանը, ամփոփմանը, հաշվապահական հաշվառման վարմանը, հաշվետվությունների ներկայացմանը, աուդիտորական հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների և դիտողությունների մասով գործողությունների ծրագրի իրականացմանը:

2) մասնակցում է ֆինանսական հաշվետվությունների նախագծերի մշակմանը, գնահատմանը, Կոմիտեին վերապահված մասով նախատեսվող և գանձվող պետական տուրքերի մասին տվյալների հավաքմանը և համապատասխան պետական մարմիններ հաշվետվությունների ներկայացմանը,

3) մասնակցում է նոր վարձատության համակարգի անցմամբ պայմանավորված Կոմիտեի աշխատողների աշխատավարձին հավասարեցված վճարների (ստաժի և կոմպետենցիաների հավելավճարների), վերապատրաստումների և արտասահմանյան գործուղումների հաշվարկմանը, փոխանցմանը և համապատասխան պետական մարմիններ հաշվետվությունների ներկայացմանը,

4) մասնակցում է ավիացիոն ոլորտում գործող ավիաընկերությունների արտադրատնտեսական ցուցանիշների, աշխատողների աշխատավարձերի և զբաղվածության, ավիաընկերությունների կատարած թռիչքների և փոխադրած ուղևորների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից ուղևորափոխադրումների վերաբերյալ ցուցանիշների ամփոփմանը, հաշվետվությունների կազմմանը և համապատասխան պետական մարմիններ ներկայացմանը,

5) իրականացնում է առևտրային օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին (օդանավ շահագործողներին) հավաստագրերի և օդանավ շահագործողի վկայականի տրման, վերասերտիֆիկացման շրջանակներում շարունակական, հուսալի և ապահով առևտրային օդային փոխադրումների իրականացման նպատակով հայտերի, բիզնես ծրագրերի, ֆինանսական հաշվետվությունների վերլուծում և մոդելավորում, դրա արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկությունների, հիմնավորումների, պարզաբանումների պահանջում, քննարկումների կազմակերպում, վերահսկողական ժամանակացույցերի կազմում:

6) կատարում է ԻԿԱՕ-ի Պետությունների գործողությունների ազգային ծրագրի (State action plan) շրջանակներում իրականացվող աշխատանքները, ուսումնասիրում է ներկայացված նյութերը, ներկայացնում կոնտակտային անձին (Focal point), ապահովում պատասխան դիրքորոշման նախագծի ներկայացումը:

7) ուսումնասիրում և վերլուծում է Եվրոկոնտրոլի Կենտրոնական քարտուղարության (DG/SEC) Երթուղու վճարների ընդլայնված հանձնաժողովի և ուսումնասիրությունների խմբի կողմից ստացվող

տեղեկատվությունը, նյութերն ու փաստաթղթերը, ներկայացնում կոնտակտային անձին (Focal point) և ապահովում պատասխան դիրքորոշման նախագծի ներկայացումը:

8) ուսումնասիրում և վերլուծում է Եվրոպական ավիացիայի և շրջակա միջավայրի աշխատանքային խմբի (EAEG) շրջանակներում ներկայացված փաստաթղթերը և ներկայացնում դիրքորոշում:

9) ուսումնասիրում, մշակում և վերլուծում է ԻԿԱՕ-ի Միջազգային ավիացիայում ածխաթթու գազի արտանետումների նվազեցման և փոխարինման համակարգի (CORSIA) վերաբերյալ փաստաթղթերը, ներկայացնում կոնտակտային անձին (Focal point), ամփոփում է ավիաընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը և ապահովում դրա մուտքագրումը համապատասխան տվյալների բազա:

V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. Փորձագետը յուրաքանչյուր ամիս Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության միջոցով Կոմիտեի գլխավոր քարտուղարին ներկայացնում է հաշվետվություններ:

7. Փորձագետի կողմից կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է Կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից բավարար, լավ կամ գերազանց:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

8. Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ ամսական և ամփոփիչ փուլ:

9. Աշխատանքը գնահատվում է յուրաքանչյուր ամիս ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

10. Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի 5-րդ կետի 1-9-րդ ենթակետերով սահմանված աշխատանքների արդյունքների:

11. Համապատասխանաբար վերջնարդյունքների չափանիշներն են՝

1) մասնակցել է բյուջետային գործընթացին, տվյալների հավաքագրմանը, մշակմանը, ամփոփմանը, հաշվապահական հաշվառման վարմանը, հաշվետվությունների ներկայացմանը, աուդիտորական հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների և դիտողությունների մասով գործողությունների ծրագրի իրականացմանը:

2) մասնակցել է ֆինանսական հաշվետվությունների նախագծերի մշակմանը, գնահատմանը, Կոմիտեին վերապահված մասով նախատեսվող և գանձվող պետական տուրքերի մասին տվյալների հավաքմանը և ներկայացրել է հաշվետվություններ համապատասխան պետական մարմիններ,

3) մասնակցել է նոր վարձատության համակարգի անցմամբ պայմանավորված Կոմիտեի աշխատողների աշխատավարձին հավասարեցված վճարների (ստաժի և կոմպետենցիաների

հավելավճարների), վերապատրաստումների և արտասահմանյան գործուղումների հաշվարկմանը, փոխանցմանը և համապատասխան պետական մարմիններ հաշվետվությունների ներկայացմանը,

4) մասնակցել է ավիացիոն ոլորտում գործող ավիաընկերությունների արտադրատնտեսական ցուցանիշների, աշխատողների աշխատավարձերի և զբաղվածության, ավիաընկերությունների կատարած թռիչքների և փոխադրած ուղևորների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից ուղևորափոխադրումների վերաբերյալ ցուցանիշների ամփոփմանը, հաշվետվությունների կազմմանը և համապատասխան պետական մարմիններ ներկայացմանը,

5) իրականացրել է օդանավ շահագործողների հավաստագրերի և օդանավ շահագործողի վկայականի տրման, վերասերտիֆիկացման շրջանակներում շարունակական, հուսալի և ապահով առևտրային օդային փոխադրումների իրականացման նպատակով հայտերի, բիզնես ծրագրերի, ֆինանսական հաշվետվությունների վերլուծում և մոդելավորում, դրա արդյունքների հիման վրա ներկայացրել է առաջարկություններ, պահանջել լրացուցիչ տեղեկություններ, հիմնավորումներ, պարզաբանումներ, կազմակերպել է քննարկումներ, կազմել ժամանակացույցեր:

6) կատարել է ԻԿԱՕ-ի Պետությունների գործողությունների ազգային ծրագրի (State action plan) շրջանակներում իրականացվող աշխատանքները, ուսումնասիրել է ներկայացված նյութերը, ներկայացրել կոնտակտային անձին (Focal point), ապահովել պատասխան դիրքորոշման նախագծի ներկայացումը:

7) ուսումնասիրել և վերլուծել է Եվրոկոնտրոլի Կենտրոնական քարտուղարության (DG/SEC) Երթուղու վճարների ընդլայնված հանձնաժողովի և ուսումնասիրությունների խմբի կողմից ստացված տեղեկատվությունը, նյութերն ու փաստաթղթերը, ներկայացրել կոնտակտային անձին (Focal point) և ապահովել պատասխան դիրքորոշման նախագծի ներկայացումը:

8) ուսումնասիրել և վերլուծել է Եվրոպական ավիացիայի և շրջակա միջավայրի աշխատանքային խմբի (EAEG) շրջանակներում ներկայացված փաստաթղթերը և ներկայացրել դիրքորոշում:

9) ուսումնասիրել, մշակել և վերլուծել է ԻԿԱՕ-ի Միջազգային ավիացիայում ածխաթթու գազի արտանետումների նվազեցման և փոխարինման համակարգի (CORSIA) վերաբերյալ փաստաթղթերը, ներկայացրել կոնտակտային անձին (Focal point), ամփոփել ավիաընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը և ապահովել դրա մուտքագրումը համապատասխան տվյալների բազա:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 5
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՀԵՏ

քաղ. Երևան «27» նոյեմբերի 2024թ.

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետ՝ համապատասխան մարմին)՝ ի դեմս համապատասխան մարմնի գլխավոր քարտուղար Միքայել Աշոտի Զալինյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և Լիա Կորյունի Մարգարյանը, գրանցված՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 5 փ., տ. 5, նույնականացման քարտը՝ 013156120, տրված 050-ի կողմից 22.11.2022թ. (այսուհետ՝ փորձագետ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համապատասխան մարմինը փորձագետին հանձնարարում է իրականացնել որոշակի աշխատանքներ, որոնց նկարագրությունը նշված է սույն պայմանագրի 1.3-րդ կետում և պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար, իսկ փորձագետը պարտավորվում է կատարել հանձնարարված աշխատանքները սույն պայմանագրով սահմանված պայմաններով:

1.2. Փորձագետն անմիջականորեն ենթարկվում է համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարին (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար): Աշխատանքների կատարման վայրն է՝ համապատասխան մարմնի գտնվելու վայրը:

1.3. Սույն պայմանագրով փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

1.3.1. մասնակցություն բյուջետային գործընթացին, տվյալների հավաքագրմանը, մշակմանը, ամփոփմանը, հաշվապահական հաշվառման վարմանը, հաշվետվությունների ներկայացմանը, աուդիտորական հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների և դիտողությունների մասով գործողությունների ծրագրի իրականացմանը.

1.3.2. մասնակցություն ֆինանսական հաշվետվությունների նախագծերի մշակմանը, գնահատմանը, համապատասխան մարմնին վերապահված մասով նախատեսվող և գանձվող պետական տուրքերի մասին տվյալների հավաքմանը և համապատասխան պետական մարմիններ հաշվետվությունների ներկայացմանը.

1.3.3. մասնակցություն նոր վարձատության համակարգի անցմամբ պայմանավորված համապատասխան մարմնի աշխատողների աշխատավարձին հավասարեցված վճարների (ստաժի և կոմպետենցիաների հավելավճարների), վերապատրաստումների և արտասահմանյան գործուղումների հաշվարկմանը, փոխանցմանը և համապատասխան պետական մարմիններ հաշվետվությունների ներկայացմանը.

1.3.4. մասնակցություն ավիացիոն ոլորտում գործող ավիաընկերությունների արտադրատնտեսական ցուցանիշների, աշխատողների աշխատավարձերի և զբաղվածության, ավիաընկերությունների կատարած թռիչքների և փոխադրած ուղևորների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից ուղևորափոխադրումների վերաբերյալ ցուցանիշների ամփոփմանը, հաշվետվությունների կազմմանը և համապատասխան պետական մարմիններ ներկայացմանը.

1.3.5. առևտրային օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին (օդանավ շահագործողներին) հավաստագրերի և օդանավ շահագործողի վկայականի

տրման, վերասերտիֆիկացման շրջանակներում շարունակական, հուսալի և ապահով առևտրային օդային փոխադրումների իրականացման նպատակով հայտերի, բիզնես ծրագրերի, ֆինանսական հաշվետվությունների վերլուծման իրականացում և մոդելավորում, դրա արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկությունների, հիմնավորումների, պարզաբանումների պահանջում, քննարկումների կազմակերպում, վերահսկողական ժամանակացույցերի կազմում.

1.3.6. ԻԿԱՕ-ի Պետությունների գործողությունների ազգային ծրագրի (State action plan) շրջանակներում իրականացվող աշխատանքների կատարում, ներկայացված նյութերի ուսումնասիրում, կոնտակտային անձին (Focal point) ներկայացնելը, պատասխան դիրքորոշման նախագիծը ներկայացնելը ապահովելը.

1.3.7. Եվրոկոնտրոլի Կենտրոնական քարտուղարության (DG/SEC) Երթուղու վճարների ընդլայնված հանձնաժողովի և ուսումնասիրությունների խմբի կողմից ստացվող տեղեկատվության, նյութերի ու փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծում, կոնտակտային անձին (Focal point) ներկայացնելը և պատասխան դիրքորոշման նախագիծը ներկայացնելը ապահովելը.

1.3.8. Եվրոպական ավիացիայի և շրջակա միջավայրի աշխատանքային խմբի (EAEG) շրջանակներում ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրում և վերլուծում և դիրքորոշում ներկայացնելը:

1.3.9. ԻԿԱՕ-ի Միջազգային ավիացիայում ածխաթթու գազի արտանետումների նվազեցման և փոխարինման համակարգի (CORSIA) վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրում, մշակում և վերլուծում, դրանք կոնտակտային անձին (Focal point) ներկայացնելը, ավիաընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվության ամփոփում և համապատասխան տվյալների բազա դրա մուտքագրման ապահովում:

1.4. Փորձագետի համար սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է համատեղությամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փորձագետը պարտավորվում է՝

2.1.2. Բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2.1.3. Պահպանել համապասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

2.1.4. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

2.1.5. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

2.2. Փորձագետն իրավունք ունի՝

2.2.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն ստանալու վարձատրություն:

2.2.2. Պահանջելու համապատասխան մարմնից ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը:

2.2.3. Իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.3. Համապատասխան մարմինը պարտավորվում է՝

2.3.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն վճարել փորձագետի աշխատավարձը:

2.3.2. Սահմանված կարգով փորձագետին տրամադրել ամենամյա և նպատակային արձակուրդ:

2.3.3. Ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ:

2.3.4. Փորձագետին ծանոթացնել կազմակերպությունում գործող ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին:

2.3.5. Ժամանակին ապահովել փորձագետին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

2.3.6. Փորձագետի անձնական տվյալները մշակելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

2.3.7. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.4. Համապատասխան մարմինն իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած պահին ստուգելու փորձագետին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը:

2.4.2. Փորձագետին ներգրավելու արտաժամյա աշխատանքների, որի տևողությունն իրար հաջորդող երկու օրերի ընթացքում չի կարող անցնել 4 ժամը:

2.4.3. Իրականացնելու աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

3.1. Փորձագետի համար սահմանվում է ոչ լրիվ աշխատաժամանակ: Աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է՝ ժամը 11:00, ավարտը՝ ժամը 18:00 և ընդմիջում՝ սկիզբը ժամը 13:00, ավարտը՝ ժամը 14:00:

3.2. Փորձագետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:

4. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար համապատասխան մարմինը փորձագետին յուրաքանչյուր ամիս վճարում է հիմնական աշխատավարձ 200 304 (երկու հարյուր հազար երեք հարյուր չորս) դրամ:

4.2. Փորձագետի պարգևատրումները նախատեսվում ու վճարվում են ընդհանուր հիմունքներով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

4.3. Փորձագետին արտաժամյա, գիշերային, հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքների ներգրավելու դեպքում վարձատրությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

5.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի: Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները

կատարվում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժան մասը:

5.2. Սույն պայմանագիրը լուծվում է աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում, ինչպես նաև առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգի խախտմամբ կնքված լինելու դեպքերում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2024 թվականի նոյեմբերի 28-ից և գործում է մինչև 2025 թվականի փետրվարի 28-ը ներառյալ:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունների չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համապատասխան մարմինը	Փորձագետը
գլխավոր քարտուղար Միքայել Աշոտի Զալինյան	Լիա Կորյունի Մարգարյան
(ստորագրությունը)	(ստորագրությունը)